ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱՀԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԱՅԼՆ

ԱՌԱՔՆԱԳՐԱՏՈՒԹԻՒՆ

Այն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 11րդ շրջանի (95 օգոստ.—96 մայիս) բաժնորդագրին 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, այն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1896 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է զրկել հետեւեալ հասցէով. M. PORTUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻՒ 77

1896 *ՄԱՅԻՍ* 2

1896 ԱՊՐԻԼ 20 (Հ. Տ.)

ԳԱՆՈՒՄ

Կը հրատարակուի [illegible] օրեր

ՏՈՂԱՏԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձուցել չհրատարակուած ձեռագիրները։ Մանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Մանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces en français et en arménien sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Թիւրքիաեն (Վան). — Քաղուածներ Անգլիաի Կապոյտ տետրակեն. — Սրճագանքի հրատարակչին դէմ զբաղարտութիւններ. — Մի պատուախնդիր Հայի կախուելը Եգիպտոսի մէջ. — Նոր խառնակութիւններ Կ. պոլսի մէջ. — Լուրտ Սալիսբրիի մէկ նոր ճառը. — Հ. Սարքիս Վ. Պարոնեան. — Հայեր ի Թիւրքիա. — Թիւրքիաեն լուրեր. — Ֆրանսա. — Շահի սպանումը. — Արտասահմանի լուրեր. — Մանուցումներ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱԷՆ

Վան-Հայոց Ձոր, մրտ. 20/1 ապրլ. 96

Անկարգութեան, ոճրագործութեան միջադէպներ այս շաբթու մէջ սովորականէ դարձան. ընդհանուր կոտորածն է որ իր հասունցումն կը դիմէ, թէեւ քողը դեռ չէ պատռուած բոլորովին։ Քննիչներն, ինչպէս և անգլիական հիւպատոսը, գիւղացիներին դեռ կը կանչեն և կը յորդորեն գիւղերը վերադառնալ, ապահովութիւն և նպաստ խոստանալով, մինչդեռ այս ձմեռի սկզբէն ի վեր չեղաւ ոչ մի շաբաթ որ ներկայ շաբաթէն աւելի պարզորոշ ցուցնէր թէ խաբուսիկ էին թիւրք կառավարութեան խելքին վրայ դրուած վերջին յոյսերը, թէ նա Մեսցած Հայութիւնն ալ երկրէն դուրս հանելու և կամ բնաջինջ անելու մտադրութիւնը ձեռքէ չէ թողեր։

Քաղաքիս փողոցներին և շրջակայքին մէջ կողոպտելու, վիրաւորելու, սպաննելու դէպքերի բազմանալովը, այժմ ա՛լ 20 կամ 30 անձով միասին և զապթիէ մ՚ալ հետ առնելով՝ քաղաքէս մէկ կամ կէս ժամ հեռի դրտնուող Աւանց, Շահբաղի և այլն գիւղերէն կարելի կը լինի քաղաք երթեւեկել. իսկ քաղաքին մէջալ միայնակ թրքական փողոցէ անցնիլ երբէք նեղելի չէ. հրապարակ-ջատտէ փողոցէ ալ 4.5 միասին պէտք է քալեն, այն ալ արեւէն մինչեւ մէկ ժամ առաջ. շուկային մէջ 50–60 խանութէն աւելի բաց չկայ, անոնք ալ օրը 2–3 ժամ միայն կը բացուին։ Առաջնորդարանի և կառավարութեան միջեւ դեռ կեղծ քաղաքավարութիւն մը կը պահուի, սակայն ոչ մի բողոքելի է. վալին իր վրայէն պատասխանատուութիւնը ձգել կը ցուցնէ, ասելով որ քրնիչները գալէն ի վեր իր ազդեցութիւն կոտրած են. այդ կէտը մեզ շատ յայտնի չլինելով և որոշ չգիտնալով թէ վալին իրեն յատուկ որոշ քաղաքականութիւն մ՚ունի՞ ընդդէմ ընդհանուր բնաջնջման քաղաքականութեան, միայն սա յայտնի է որ քաղաքի Թիւրքերը քննիչների գալէն ետք, շատ սպառնալից մի դիրք բռնած են և քննիչներն իրենք ալ չեն կեղծեր իրենց խորին ատելութիւն դէպի հայ տարրը։

Քաղաքի այս ընդհանուր անապահովութիւնը, հայ փողոցների մէջ պահականոցների և հսկողութեան շատնալը, ամեն օր պատահած ծեծի, վէրքի, կողոպուտի դէպքերը կրնային օրն օրին մոռցուիլ և դեռ լաւատեսութեան անկիւն մը թողուլ. սակայն երէկուան պատահածը վերջին յոյսերը ցրել եկաւ։

Երէկ առաւօտ, քաղաքէս 2 ժամ հեռի գտնուող դարմանդեղ և Ոսկիբակ գիւղերէն խումբ խումբ գիւղացիներ, կնիկ, տղայ, մարդ, լալով քաղաքս թափեցան։ Նոյն գիշերը Շեմզկի զինեալ բազմաթիւ Քրդեր — ըստ գիւղացւոց մէկ մասի պատմելուն և ըստ ոմանց 13 Քիւրտեր միայն — յարձակելով նոյն գիւղերի վրայ, 6 մարդ Դարման գիւղէն և 14 մարդ Ոսկիբակէն սպաններ և տարեր, ոչխարը քշեր տարեր են, Դարման գիւղի քահանան ալ կոտորեր անելով։ Գիւղացիները դիմեցին անգլիական հիւպատոսին որ չհաճեցաւ զիրենք տեսնել. յետոյ քննիչներին ու վալիին բողոքեցին որոնք եկան թապուր-աղասին մի քանի զապթիէներով զրկեցին և առնք Ողդայ գիւղէն անցնելով, այնտեղի մնորդոց ոտքէն կօշիկները հանեցին որ իրենք հագնին ու ճամբայ քալեն. չգիտենք թէ երբ զինուորներին իսկ արդիլուած է իրենց գտնուած գիւղերի վրայ յարձակող Քիւրտերին դէմ կրակ անել, զապթիէներն ի՞նչ կրնան անել. սակայն Թիւրքերն երբէք չեն ձանձրանար ապահովելու ցոյցեր անելէ։ Առաջնորդական Տեղապահը միւֆթիներին գանգատած էր այդ դէպքի մասին և պատասխան ստացած էր թէ «Դէպքին հեղինակները Հայեր են որոնք այդ տեսակ ոճիրներ գործելով կաշխատին հայկական խնդիրը վերարծարծել». ա՛լ ի՞նչ արդարութիւն կամ ի՞նչ ապահովութիւն. քննիչների այդ խօսքը կը նշանակէր պարզապէս թէ «Ա՛լ ձեր գործ լմնցած է. դուք ո՛չ հայ ունիք ուտելու այս երկրի մէջ և ո՛չ արեւ՝ տեսնելու. առէ՛ք ձեր գլուխ և ռատտ ելէք այս երկրէն, եթէ կրնաք»։ Այս խօսքեր եթէ ոչ պաշտօնապէս, բայց անհատներու բերնէն արդէն կը լսուին և ինչպէս կը լսենք, Էրզրումի Հայերը մեծ թուով կը դաղթեն կառավարութեան արտօնութեամբ և այստեղ ալ 4–5 հոգի որոնք Պարսկաստան անցնելու անցագիր ուզած էին, դիւրութեամբ ստացան. անցագրատան տեսուչը Հայերին ասեր է որ այժմ առի դժուարութիւններ չկան արտասահմանի անցագիր առնելու և եթէ կուզեն, թող դիմեն։ Երէկ խօսք կար թէ 2 3 օրէն նոյն բանակառավարութիւնը մունետիկով պիտի յայտարարէ։

Քիւրտերի գեղերէն հասած տեղեկութիւնները կը ցուցնեն որ քիւրտ բէկերը այս ձմեռ պատրաստութիւններին աւելցունելով և իրար հետ բանակցութիւններ շատցնելով անցուցած են. Շեմզկի Տրպազ և Շաւեցի Ճէվհէր բէկը յառաջիկայ կոտորածի նախաձեռնութիւնը պիտի ստանձնեն. կողոպուտի խնդիր չկայ ա՛լ, այլ ջարդի. այժմէն միայն իրենց ձեռքի տակի երրորդական աւազակները կը գործեն մինչեւ որ ձիւները հալին և ձիի ճամբան բացուի. 3 օր առաջ Սարայ ասորի գիւղին վրայ յարձակեցան խումբ մը Քիւրտեր. այնտեղ զօրք կար բանակած որ սակայն կրակ չբրաւ Քիւրտերի վրայ. միայն գնդապետին հրամանով օդին մէջ պարպուեցան հրացաններ որ Քիւրտերին մի վնաս չլինի և առ այժմ ձգեն երթան. Քիւրտերը քաշուեցան, այդ անդամ միայն մօտիկ ջրաղացի մը մէջ գտնուող 3 Ասորիներ սպաննելով. յաջորդ օրն ալ Հաւշասորիկ ասորի գիւղէն 6 մարդ ըսպաննեցին։

Քիւրտերն որոնք անցեալ աշնան կոտորածին դեռ երկիւղ ունէին թէ չեն մարսեր և ատով իրենցմէ ոմանք մի քանի հայ գիւղեր պահպաներ էին ուրիշ Քրդերի յարձակումներէն որ իրենք գէշ մարդ չերեւին մէկ կողմէ և միւս կողմէ ալ, եթէ ուրիշները մարսեն ըրածնին, յետոյ իրենք ամբողջովին տիրեն նոյն հայ գիւղերի գոյքերին, այս գարուն իրենց նպատակն անշուշտ պիտի գործադրեն։ Մի՛ թիֆթիշէ, բարեկարգչէ քիչ մը վախ ուներ, այդ ալ ցրեցին. ատոնց ատամները համրեցին, որովհետեւ եկող քննիչներն ոչ թէ զիրենք պատժեցին, այլ միայն իրենց բաժինը պահանջեցին և մօտաւորապէս 1500 ոսկի ստացան քիւրտ գլխաւորներէ։ Ա՛լ կըրնաք երեւակայել թէ կիւրտի ժամանակէն աւարելու աւրելու սովորոյթներին մէջ 1000աւոր տարիներ կրթուած մի ցեղ, երբա՛լ ոչ մի թումբ և սանձ չտեսնէ իր առջեւ, ա՛լ կը թողո՞ւ քաղաքակրթութեան մի հետք այս դժբաղդ երկրի մէջ։

Պիտի ասէք թէ չկա՞յ բնաւ յեղափոխական կորովի տարր մը երկրին մէջ, գոնէ ցեղին պատիւը փրկելու համար։ Մ՚օտիկ ապագայի իրողութիւնները կրնան ատոր պատասխանը բերել ձեզ և ոչ թէ սենեկի գրիչ մը. միայն կը կանխեմ ասել որ այդպիսի մի տարրի վիճակը, դործունէութիւնը չափազանց անհանձելի հանգամանքների մէջ պիտի լինի։ Նա պիտի շարժի և գործէ բոլորովին անբանացած գիւղացի տարրի մը մէջ որ չհամարձակիր մինչեւ իսկ անոր օգնուիլ ուզելը դիմելու. այդ գիւղացին կը տեսնէ որ Քիւրտը սպանութեան համար եկած է. հարիւրաւոր թարմ փորձերով գիտէ որ կառավարութիւնը ոչ մի անգամ մի աւազակ չհալածեց, սակայն դեռ կը վարանի, գոնէ վրէժ մը հանելու համար հայ յեղափոխականների դիմել և ժամանակին իմաց տալ Քիւրտերի յարձակումը։ Կոտորածի ատեն, ինչպէս վերջին Ցառուխի և երէկուան դէպքերը ցոյց տուին, ոչ մէկի մտքէն պիտի անցնի վայրկեան մը դիմադրել. ո՛վ որ կըրնայ գլուխն ազատել, պիտի ՀանայՄերկ ու բոպիկ քաղաք վազելով. ոչխարներ են մարդկային դէմքով։

Քաղքցիներին դալով կը վախեմ թէ անոնց մի մեծ մասը կրկին նոյն յիմարութեան մէջ իյնան, ինչպէս անցեալ տարիներ։ 3.4 տարիէ ի վեր յեղափոխական կոչուած օտար դործակալներ, «Հնչակ»ի պէս թերթերի առաքեալներ, օրօրած էին երիտասարդութեան մի մեծ մասը թէ դրսէն իրենք զէնք կը բերեն և կամաւորներ ունին. այդ ՀԱցումով, ձրի կամ ժան զէնքի յուսով, շատ շատեր փոյթ չա-

ին օր առաջ իրենց դրամով զէնք գնելու. 3.4 ոսկի տալ հրացանի՝ սուղ կերեւէր իրենց (թէեւ այժմ 10.12 ոսկի ալ կուտան և չեն կրնար ձեռք բերել). այժմ ուրիշ աւելի նոր արթնցողներ նոյն յոյսերով լի, առաջինների անհոգութիւնը կը ցուցնեն։ Այս չորս տարիների մէջ կրուած յուսախաբութիւններ, այդ խոստումներէ 100էն մէկին անգամ չիրագործուիլը, եղած միլիոններով վնասները, երէկուան փաստերը, ո՛չ մին չեն կրնար համոզիչ լինել այդ մասի համար։ Անհաւանութեան մասին Հրէայներն ա՛լ չեն կրնար առաջին ազգը սեպուիլ։

* * *

Ց. Գ. — Շատախէն (վանէն 18 ժամ հեռի մի գաւառ է) այժմ լուր հասաւ թէ քրդական արշաւանք մը գործուեր է այնտեղ աւանին վրայ և Հայերը դիմադրած են. Քրդերէն իբր թէ 30 հոգի կան սպաննուած իսկ Հայերէ 70. այդ բացառիկ դէպքի մասին բամասնութիւններ ձեզ հաղորդել կը ջանամ ստուգելէ ետք։ Շատախ լեռնային մի գաւառ է և տեղացիները զինավարժութեան մէջ ուրիշ գաւառների օրինակ կրնան լինել։

Անցեալ անգամ գրած էի ձեզ վերապահութեամբ թէ Հայոց Զորի Կղզի գիւղը բանակած զօրքերի մի խումբ իր հարիւրապետի հրահանգներին համեմատ Զորին մէջ ապահովութիւն վերահաստատած է։ Այդ լուր ստոյգ էր. սակայն դժբաղդաբար կառավարութիւնը ձեր թղթակցէն աւելի շուտ տեղեկութիւններ ստացած լինելով այդ մասին, հարկ տեսաւ այդ խումբ տեղափոխելու, հակառակ նոյն Զորի գիւղացիների թախանձանքին։ Այս շաբթու այդ զինուորներ իրենց հրամանատարով Պարսկաստանի սահմանագլուխները, կըսուի թէ, տեղափոխուեցան։

Երէկ 3 գիւղերի (Զարանց, Լիմ, Ցառուխ)ներկայացուցիչները ռուսական հիւպատոսարանը դիմած էին այս խօսքերով. «Քանի որ մեզ պիտի ըսպաննեն և կամ թրքացնեն, ինչո՞ւ մեզ չէք ընդունիր ռուսադաւանութեան մէջ. ինչո՞ւ կուզէք մեր քրիստոնէութիւնը կորսնցուցնենք»։ Պատասխանը մեզ բոլորովին ճշդութեամբ յայտնի չէ։

Կը լսենք որ այս առաւօտ քննիչ ֆէրիքը պիտի մեկնի 200 ձիաւորներով պարսկական սահմանագլխոյ կամ Գաւառի կողմերը. չը գիտենք թէ հոն ի՞նչ բարեկարգութիւններ պիտի ընէ։

ՆՈՅՆ

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ
ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱՊՈՑՏ ՏԵՏՐԱԿԷՆ

Կ. Նճի Առաջնորդական Տեղապահ Վարդան վարդապետի հարցաքննութիւնը

(Նար. 76րդ թուէն)

«Բայի Զէյլանի Շէյխ Մէհէմէտէն, միւս բոլոր շէյխերը, իմամները հոն կը գտնուէին։ Զէյլանի շէյխին տրամադրութեան տակ դրած էին վրան մը և անոր հետեւորդ՝ տեղակալ մը և փողահար մը։ Թալօրիի այդ գիւղերն այրելէ ու կործանելէ և բընակիչները սպաննելէ ետքը, զօրքերն ու Քիւրտերը խիանի ճանբան բռնեցին։ Նախ Աքչէսէր գիւղը պաշարեցին։ Բոլոր իրենց ձեռք ինկածները սպաննեցին. այրեցին տուները։ Քըզըլ-Մանասդըր վանքի կրօնականներէն Մամբրէ վարդապետը, քահանայի որդին, սպաննեցին ու կտոր կըտոր ըրին։ Նոյնպէս զօրքերն ու Քիւրտերը միասին կողոպտած ու տարած էին Արտըկուք, Սէվիդ, Կուշնաք գիւղերի դոյքերը, կարասիները, ոչխարներն և եզները։ Այս բոպէիս միւչիրը լեռը հասնելով հրամայեր է դադրեցուցել կոտորածը։»

Այս իսմայիլը լեռնէն վերադարձին քանի մը օր հիւանդացած էր։ Երբ պատճառը հարցուցի, պատասխանեց թէ «Մենք շատերս հիւանդացանք դիակների գարշահոտութենէն։ Միւչիրը հասած՝ն պէս հրամայած էր դիակները հեղեղատներին մէջ նետել, ադկէ դոյանալիք հիւանդութիւնների առջեւն առնելու համար։ Քանի մը դիակների, որոնց վզին չուաններ անցուցինք մինչեւ հեղեղատների եզերքը քաշել տանելու համար, վիզը, այսինքն գլուխը մարմնէն փրթաւ և մենք ստիպուեցանք ձողերով գլորելով մինչեւ հեղեղատներն ու ջուրը տանիլ։ Քիւրտերին թոյլատրուեցաւ իրենց գիւղեր վերադառնալ իրենց կողոպուտներով և զօրքերն ալ հեռացան այդ տեղերէ, հետերնին տանելով իրենց կողոպտածներէ ամեն ինչ որ կարելի էր տանիլ։

Ահա Մարտուանի զապտիյէ իսմայիլի ինծի պատմածները։

Կը յայտնեմ նոյնպէս թէ Թալօրիի գիւղերը կախում ունին կէնճի առաջնորդական տեղապահութենէն և ինչպէս որ գիտէք, երբ այդ երկիրների ժողովուրդները գանգատ մը ունենան, կերթան իրենց քահանան կամ Առաջնորդը կը գտնան անոր իմացունելու համար։ Դէպքերէն ետքը կէնճ եղած բոլոր միջոցիս Թալօրիէն հինգ մարդ միայն կրցայ տեսնել և Մուշ հանելէս յետոյ մինչեւ հիմա միայն չորս հոգի եկած են ինծի։ Այդ չորս անձերէ երբ Օհան Խաչոեանն և Օհան Յօնէեանը տեսայ, որոնք Խէլօվիտ գիւղէն էին, դէպքերի մասին հարցումներ ըրի. պատասխանեցին թէ զօրքերին հասած պահուն իսկ, կեանքերնին ազատելու համար ամեն բան թողլով փախեր են. և վերջը երբ միւչիրն եկեր է, վերադարձեր և իրենց գիւղ այրուած ու կործանած դտեր են, իրենց բոլոր դոյքեր յափշտակուած ու մարդերը սպաննուած։ Յայտնեցին նաեւ թէ անցած դարուն Խէլօվիտի անտառին մէջ ածուխի նման այրուած շատ մը մարդկային ոսկերոտիներ տեսեր են։ Այդ Խէլօվիտցիներ չեն գիտեր թէ ինչո՞ւ այդ ոսկորներ ածխացեր էին։ Արդեօք այս մարդերը կապելէն վերջը կենդանի այրե՞ր են։ Եւ կամ այդ ոսկորներ աճիւն դարձած դիակների՞ ոսկորներ են։ Բայց որովհետեւ ոչ մէկէն լսուեցաւ որ դիակներ աճիւն դարձած ըլլան, կարելի է հետեւցունել թէ յիշեալ ոսկորներ կենդանի այրուած մարդերի ոսկորներ են։

Աքչէսէրի քահանայն Մկրտիչ, որ Մամբրէ վարդապետի հայրն է, պատմեց ինծի թէ իրենց գիւղի մէջ զօրքերը յղի կնոջ մը գլուխը կտրեցին. տղան անգանդէն դուրս քաշել հանելէ ետքը, մօրը կուրծքին վրայ դրեր և այդ դիրքի մէջ գլուխը կտրեր են։ Երախայն մանչ էր։ Ադկէ զատ կնոջ կողերը ճեղքած էին, երախային ձեռքերը մէջը խոթելու համար։

Վալին, այսինքն Պիթլի ի վալի Թահսին փաշան ուղեւորութեան ելած ըլլալով, դէպքերի միջոցին կէնճ եկած էր։ Ճիշդ տեղեկութիւններ առնելու համար Պատիքանի աղան բերել տուաւ և անոր եկած ատեն ես կամուրջի կրափուռին մօտ կը գտնուէի. այդ փուռի գործաւորների գլխաւորը, Խուլբի Խոր գիւղացի Պօղոս, քովս կը գտնուէր։ Երբ իմացուցին թէ Պէտրխան աղան կուգայ, ճամբուն վրայ ելանք. Պէտրխան աղան Ցախի Եուսուֆ անուն Քիւրտի մը հետ եկաւ. Պէտրխան աղա իմ հին ծանօթս ըլլալով, երբ իրեն հարցուցի թէ ո՞ւր և ինչո՞ւ կերթար, պատասխանեց որ վալին կանչած է զինք. «Կը վախնամ, ըսաւ, թէ զիս բանտ դնէ։» — «Ինչո՞ւ համար, ըսի, պիտի բանտարկէ քեզ։» — «Կառավարութիւնը, ըսաւ, Մէճիտ էֆէնտին ղրկելով նախ քիւրտ ցեղերը կանչեց, ըսելով որ Շէնիք, Սէմալ և Թալօրի գան։ Ժամանակը հասած ատեն նորէն զապտիյէ մը եկաւ կանչելու ցեղերը, որոնք իսկոյն հաւաքուեցան. ինծի ալ զապտիյէ մը եկաւ, բայց ես չգնացի. նորէն եկաւ. ես ալ պատժուելէ վախնալով գնացի։»

Նա հետեւեալ ցեղերի անունները տուաւ. Պատիքանլի, Հավէտանլի, Խուլբլի, Խիանլի, Պէքրանլի Բէչքօտանլի, Պանօքլի, Նէրէպլի, Էկէլի, Խարզանլի, Պէլէքլի, Սասունլի, Մալէշէկօլի, Պէտրլի և ուրիշ մի քանի ցեղերի անուններ ալ թէեւ ըսաւ, բայց չեմ յիշեր։ Իրենց պետ, հրամանատարը, այսինքն զօրքերի հրամանատարը իր մօտ կանչելով զանոնք և նախ տեղերը ու ձորերը նշանակելով, ըսաւ ցեղերին, որ Անտոքտաղի բոլորտիքն և ուրիշ տեղերը, գիւղերն ու արօտավայրները չորս կողմէն պաշարեն, մինչեւ որ շարժումն սկսելու հրամանը դայ իրենց։ «Ձեր վրայ կը վստահիմ, յարեց, նայեցէ՛ք որ մէկը չփախչի։ Նախ դուք, Պէքրանլի և Պատիքանլի ցեղեր, անոնց հետ կռուի բռնուեցէ՛ք։» Այս հրամանի վրայ Պէքրանլիներն ու Պատիքանլիները պատերազմի սկսան։ Քրիստոնեայները փախուցին զանոնք։ Զօրքերն երբ տեսան որ Քիւրտերը չկրցան դիմանալ, Քիւրտի հագուստ հագնելով մեր ցեղերի օգնութեան եկան։ Բայց երբ բարձրագոյն հրաման եկաւ, զօրքերն սկսան յայտնապէս ցեղերին հետ միանալով պատերազմիլ։ Հայերը զօրքերը տեսնալնուն պէս չկրցան դիմադրել և փախանզանոնք հալածելով՝ բոլոր իրենց ձեռք ինկածները, այր, կին, տղայ, կը կոտորէին։

Վերոյիշեալ անձերէն առած տեղեկութիւններս Պէտրխան աղան ալ կը հաստատէր և ինք ալ վշտացած էր երկրին այսպէս կործանուելուն. նա կը յարէր նաեւ թէ «Կառավարութիւնը հրամայեց մեզի և մենք ալ այս գործի մէջ գտնուեցանք. հիմա վալին կանչեց զիս. կը վախնամ որ բանտարկել տայ։»

Պէտրխան աղան վալիին մօտ գընաց, բայց չբանտարկուեցաւ և գիշեր մը հոն մնալով ետ դարձաւ։

Արտուշէնի Քասիմ պէյ զապտիյէն, որ դէպքերի պատահած տեղը գտնուած էր, վերադարձին հանդիպելու համար կամուրջին մօտ իմ վրանս իջաւ. հիւանդ էր և հրացանը կրելու ոյժ չունենալով, գործաւորներէն մէկը ուղեց որ հետը տանի և յայտնեց որ հիւանդութեան պատճառը դիակների հոտէն էր։ Կամուրջէն անցնելով և անոր միւս կողմը հանգչած ատեն, դէպքին վրայ տեղեկութիւններ հարցուցի. նա պատմեց ինծի ուրիշներէն ստացած միւնոյն տեղեկութիւններս և այս խօսքերն աւելցուց. «Երկիր մը քանդեցինք ու հիմա կը վերադառնանք։»

(Ստորագրուած)

Կ. Նճի Առաջնորդական Տեղապահ
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՑԱԿՈԲԵԱՆ

«ԱԲԶԱԳԱՆՔ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ ԴԷՄ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիմանանք թէ Թիֆլիզի Արձագանքի հրատարակիչ-խմբագիր Տիար Աբգար Յովհաննիսեանց քաղաքական զրպարտութիւնների, կամ ինչպէս իրենք Ռուսահայերը կը գրեն, ինսինուացիաների զոհ եղած լինելով, Բէթերսպուրկ կանչուած է բացատրութիւններ տալու համար իրեն վրայ եղած մեղադրանքներին։

Շատ հաւանական է որ Տիար Ա. Յովհաննիսեանց կարենայ ինքզինք արդարացունել ռուսական օրէնքներին առջեւ և իր անմեղութեան շնորհով անպարտ դուրս ելնել դատարանէն, բայց ցաւալին այս է որ այդ մատնութիւնների մէջ Հայի մատեր խաղցուած կերեւին, կուսակցական կիրքերէ շարժուած։

ՄԻ ՊԱՏՈՒԱԽԵՂԻՐ ՀԱՅՆ ԿԱԹՈՂԻԿԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Արմենիան ընթերցողներին յայտնի է որ Գահիրէի մէջ Մշեցի Մուշեղ անուն մի երիտասարդ խեղդած ըսպաննած էր մի թիւրք զօրք որ Սասունի մէջ Հայերի կոտորածին մասնակցեր էր և իր պժգալի զազանութիւններ հրապարակով և պարծանքով կը պատմէր Գահիրէի սրճարաններին մէջ բազմութեան առջեւ (1)։

(1) Տեսնել «Արմենիա»ի սոյն տարեշրջանի 23րդ թիւը։

Դատարանը մահի դատապարտեր է այդ երիտասարդ, առանց նկատի առնելու դատին մեղմացուցիչ հանգամանքները։ Ի զուր զանազան կողմերէ խնդիրներ մատուցուած են երիտասարդին կեանքը չնորհուելու համար։

Եգիպտաբնակ Ֆրանսացիներն Հայերին համար աւելի համակրական շարժում մը ըրած են այս առթով քան թէ Անգլիացիները որոնք Հայերին մանաւորապէս պաշտպան հանդիսանալու յաւակնութիւնն ունին և իրենց կառավարութեան տակ գըտնուող երկրի մը մէջ կախաղան կը հանեն մի Հայ որ իր քոյրերի պատիւը բռնաբարող և իր հարիւրաւոր եղբայրներ սպաննող մի զօրք պատժեր է երբ սա իր այդ գազանութիւնների հրապարակական և պարծենկոտ պատմութիւնովը գրգռած էր զինք։ Ինչ ըսեր թէ դատարանը պէտք է որոշեր թէ Մուշեղ անպատճառ այդ զօրք սպաննելու հարկին մէջ կը գտնուէր. բայց միթէ՞ մեղմացուցիչ հանգամանքներ չկային այդ սպանութեան գործի մէջ։ Մուշեղ որ պատուասիրութեան զգացումով գրգռուած վիճակի մը մէջ մէկ մարդ մը, իր քոյրերի պատիւը պղծող մը, սպաններ է, մահի կը դատապարտուի. հապա ի՞նչպէս առանց ոեւէ դատապարտութեան կրնար պտըտիլ Գահիրէի փողոցներին մէջ այդ մարդ, որ բազմաթիւ կոյսերի և կիների պատիւը բռնաբարելէ զատ՝ շատ մարդեր ալ սպաննած էր ինչպէս որ ինք հրապարակով կը խոստովանէր. ուրեմն Մուշեղ ա՞նոր համար կախուեցաւ որ մէկ մարդ սպաննած էր և ոչ թէ շատ մարդ, քանի որ շատ մարդ սպաննողին ոչ ոք կը դպչի, իսկ մէկ մարդ սպաննողն է որ կախաղան կը հանեն։

Echo d'Orient լրագրի տնօրէնը որ մի Ֆրանսացի է, Մուշեղին ի նըպաստ մի աղերսագիր շրջաբերութեան հանած էր որ 4000 քրիստոնեայներէ ստորագրուեցաւ։

60էն աւելի հեռագիրներ և բազմաթիւ ստորագրութիւններ կրող մի խնդրագիր գնաց Ֆրանսացի Տ. Սուարէզ սեղանաւորին միջոցով Խըտիվի պալատը, Մուշեղին ներում խնդրելու համար. բայց դատական նախարարութեան խորհրդական Անգլիացի Սըր Սքոթ պնդեց մահապարտութեան վճռին վրայ և նախարարական խորհրդին առաջարկեց որ ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չընդունի։

Վերջապէս, Խըտիվի դիմումներեն եղած բազմաթիւ դիմումներին հակառակ, խեղճ Մուշեղը կախաղան հանուեցաւ ապրիլ 28ին Գահիրէի մէջ, զօրանոցին առջեւ, հրացանակիր 400 ոստիկաններէ շրջապատուած մի քառակուսիի մէջտեղ և 10,000ի չափ դիտողների աչքին առջեւ։ Հեծեալ ոստիկաններ ցրուեցին ամբոխը։ Վախնալով որ Հայերի կողմէն մի ցոյց կը լինի և անկարգութիւններ կը ծագին, անգլիական երեք գունդ զօրքեր պատրաստ կեցած և տեղաւորուած էին զօրանոցի դուռներին ետեւ, ի հարկին անմիջապէս ոստիկանութեան օգնութեան հասնելու համար։ «Նիւ Եորք Հէրալտ»ին եկած մի հեռագիր կըսէ թէ ամեն մէկ զօրքի 20 գնտակ բաշխուած էր։

ՆՈՐ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Կ.ՊՕԼՍԻ ՄԷՋ

Կ.պոլսէն ապրիլ 28ին (երեքշաբթի) հեռագրած են անգլիական լրագիրներին թէ նոյն օր կէսօրէն յետոյ Ղալաթիայի մէջ անգլիական փոստին մօտ մի կռիւ պատահած է Հայերի և ոստիկանների միջեւ որոնք կուզէին ձերբակալել Հայերը։ Ոստիկաններէ մին սպաննուած է։

Փարիզի «Թան» լրագրի թղթակիցն ալ միեւնոյն նիւթի վրայ հետեւեալը հեռագրած է. «Այն 29 Հայեր որ երէկ ոստիկանութեան մի պաշտօնեայ սպաննեցին Ղալաթիայի մէջ, կերեւի թէ պարզ չարագործներ (?) էին և ոչ թէ յեղափոխականներ։ Գլխաւոր յանցաւորն անմիջապէս ձերբակալուեցաւ։

«Այսօր (չորեքշաբթի) մի կռիւ ծագեցաւ Դուժդափու Բիւրտ և Հայ բեռնակիրների միջեւ։ Շատեր վիրաւորուեցան։»

ԼՈՐԴ ՍԱԼԶՊԷՐԻԻ ՄԷԿ ՆՈՐ ՃԱՌԸ

Գարնանածաղիկների (1) Միութեան Մեծ Բնակարանի տարեկան ժողովին մէջ որ չորեքշաբթի օր դումարուեցաւ Լոնտոն Բօվէնթ Կարտըն Թատրոնին մէջ, Լորդ Սալզպըրին որ այդ Միութեան մեծ վարպետն է, մի ճառ խօսեցաւ որմէ կը քաղենք Հայաստանի վերաբերեալ մասը։

«Իմ մասիս, ես այնպէս կը հաւատամ թէ Հայաստանի կոտորածների պատասխանատուութիւնը անձնապէս Սուլթանին վերագրելու չէ։ Այդ կոտորածներ ցեղերի և կրօնական հաւատալիքների իրար դէմ ունեցած մրցումների հետեւանքներն են որոնք երեւան կուգան մի տկար կառավարութեան տակ։

«Այդ կառավարութեան վրայ ազդեցութիւն գործելու երկու միջոց միայն կայ. առաջինն է իրեն ներկայացունել եւրոպական համաձայնութեան պահանջները որոնց ազդեցութիւնը միշտ ճանչցած է. երկրորդ միջոցն ալ յորդորներ տալու մէջ կը կայանայ։ Արդ, անգլիական ներկայ կառավարութեան իր նախորդներէ մնացած միակ գէնքը յորդորանքն էր։ Պարտաւորուած լինելով իր նախորդների քաղաքականութիւնը շարունակելու, այդ պլատոնական միջոցը գործածեց որչափ որ կրցաւ և միակ հետեւանքն եղաւ յուսահատութեան հասցունել անոնց վայրենի կիրքերը որոնք երկիւղ կը կրէին իրենց ցեղի և իրենց հաւատքի գերազանցութեանը համար. ուրեմն, իրօք, ակամայ գրգռած եղաւ այն սոսկալի դէպքեր որոնք ատկէ յետոյ երեւան եկան։ Ահա այդ եղաւ Ռոզպէրիի կառավարութեան թողած ժառանգութիւնը։»

(1) Պահպանողականների մէկ նշանն է։

Հ. ՍՈՒՔԻԱՍ Վ. ՊԱՐՈՆԵԱՆ

Արժ. Տ. Սուքիաս Պարոնեան գիտնական վարդապետը որ Մանչէսթրի Հայերի հոգեւոր հովուութեան պաշտօնը կը վարէր, աստուածաբանութեան տոքթէօրի պատուի աստիճանն է ստացել Տէօրհամի համալսարանէն։

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐԻԱ

Երուսաղէմի պատրիարքութեան Կ.պոլսի փոխանորդը Դեր. Տ. Սիմէոն Արքեպիսկոպոս Սէֆէրեան սրտի կաթուածէն վախճաներ է ապրիլ 13/25ին։

Հանգուցեալը որ բնիկ Կէյվէցի էր, մեր հին եպիսկոպոսներէ մին էր. ձեռնադրուած էր 1867ին Գէորգ Կաթողիկոսէն և 66 տարեկան էր այժմ։ Երկար ժամանակէ ի վեր Երուսաղէմի պատրիարքական փոխանորդի պաշտօնը կը վարէր Կ.պոլսի մէջ և Կ.պոլսի Ցարութիւն պատրիարքի հրաժարէն յետոյ մինչեւ Աշըգեանի ընտրութիւնը Կ.պոլսի պատրիարքութեան Տեղապահի պաշտօնն ալ վարեց։ Հին ատեններ ազգային այլ և այլ պաշտօններ ալ վարած է։

Վախճանման հետեւեալ օրը, կիրակի, Մայր-եկեղեցիին մէջ կատարուեր է օծման և յուղարկաւորութեան արարողութիւնը որին նախագահեր է Ամեն. Տ. Մատթէոս Պատրիարք Իզմիրլեան։ Դեր. Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան պատարագը մատուցեր և Ամեն. Պատրիարքը դամբանական քարոզը խօսեր է։ Ցուղարկաւորութեան թափորին՝ որին կը նախագահէր Ամեն. Պատրիարքը, կը մասնակցէին 20 քահանայներ, 10 վարդապետներ և 6 եպիսկոպոսներ։ Ատենցմէ զատ, եկեղեցականներէ ոմանք ալ իբրեւ սգակիր կը հետեւէին դագաղին։ Թափորը Ցոյների եկեղեցիին առջեւէն անցած ժամանակ, յոյն եկեղեցականներն ալ զգեստաւորուած ուղեկցեր են թափորին մի քիչ տեղ։

Մարմինը տարուած ամփոփուած է Պալըգլըի գերեզմանատունը։

Վարչական մարմիններն Երուսաղէմատուն երթալով որ Գուժդափու պատրիարքարանին մօտն է, ցաւակցութիւն յայտնած են Տ. Գէորգ Ծ. վ. Երէցեանին որ Երուսաղէմի պատրիարքի Կ.պոլսի փոխանորդութեան օգնականն է։

ԹԻՒՐԻԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ.պոլսէն կը հեռագրեն ապրիլ 29ին թէ անցած տարի Ճիտտէի Ֆրանսական, ռուսական և անգլիական հիւպատոսներին դէմ եղած յարձակումներին համար տուգանքի վճարման խնդիրը կարգադրուած է հիմա։ Բ. Դուռը Ֆրանսական, ռուսական և անգլիական դեսպանատուններին՝ Օսմանեան դրամատան միջոցով պիտի տայ 24,000 օսմ. ոսկի ամսական երեք վճարումով՝ իւրաքանչիւրին 8,000 ֆր., մայիս 22էն սկսած։

ՖՐԱՆՍԱ

Նոր Նախարարութիւնը կազմուեցաւ չափաւոր հանրապետականներէ հետեւեալ կերպով.

Միլիւ Նախարարապետ և հողագործական Նախարար. Պարթու Ներքին գործերի, Հանօթօ արտաքին գործերի, Տարլան դատական, Ժորժ Ֆոշրի ելեւմտական, զօրավար Պիլլօ պատերազմական, ծովակալ Պենեար ծովային, Բամպօ, հանրային կրթութեան, Հանրի Պուշի առեւտրական, Անտրէ Լեպոն գաղթային և Թիւրեկ հանրային շինութիւնների Նախարար։

Նոր Նախարարութիւնը իր յայտագիրը ներկայացուց հինգշաբթի օր Ծերակոյտին և Երեսփոխանական ժողովին մէջ։ Այս վերջինի մէջ արմատականներն ու ընկերվարականները միացած քննադատեցին Նոր Նախարարութեան յայտագիրն ու իր կազմութեան կերպն անգամ. բայց վիճաբանութեան եզրակացութիւնները քուէի դրուելով, Նախարարութեան ընդունած բանաձեւը որ միանգամայն վստահութիւն կը յայտնէր Նոր Նախարարութեան վրայ, 43 ձայնի առաւելութեամբ ընդունուեցաւ։ Հետեւապէս Նոր կազմուելիք Նախարարութեան դէմ արմատականների և ընկերվարականների միացած ջանքերով մի քանի օրվ ի վեր եղած աղմուկներն ու սպառնալիքները յաղթական արդիւնք մը չունեցան, գէթ առ այժմ։

— Հանրապետութեան Նախագահը և Տիկին Ֆէլիքս Ֆոր երեքշաբթի երեկոյ մի ճաշկերոյթ տուին Պուլկարիայի իշխանին պատուի համար։ Հանրապետութեան Տ. Նախագահը Ս. Ալեքսանդրի մեծ ժապաւէնի պատուանշանը կը կրէր և իր աջ կողմն ունէր Պուլկարիայի Ֆէրտինանտ իշխանը որ հանդիսական համազգեստ հագած և Պատուի Լէգէոնի մեծ ժապաւէնը դրած էր։ Տիար Նախագահին ձախ կողմը նստած էր Թրքական դեսպանը. Տիկին Ֆէլիքս Ֆորի աջ կողմը նստած էր Ծերակոյտի Նախագահ Տ. Լուբէ և ձախ կողմը Երեսփոխանական ժողովի Նախագահ Տ. Պրիսօն։ Բազմականն ըրին մէջ կը գտնուէին թէ՛ Ֆրանսայի Նախարարներէն ու բարձր պաշտօնատարներէն ոմանք և թէ՛ իշխանին ուղեկցող պուլկար բարձր պաշտօնատարները։

Հանրապետութեան Նախագահը բաժակ առաջարկեց ըսելով. «Կը խմեմ Ն. Կ. Վ. Սուլթանի կենացը.» այդ միջոցին նուագածուները համիտիէ քայլերգը նուագեցին. Տ. Նախագահը յարեց. «Կը խմեմ Նորին Արքայական Բարձրութիւն Պուլկարիայի Ֆէրտինանտ իշխանի Նորին Արքայական Բարձրութիւն Մարի Լուիզ իշխանուհիի և Նորին Արքայական Բարձրութիւն Պորիս իշխանի կենացը։» Այդ ժամանակ նուագածուները նուագեցին պուլկարական ազգային երգը։

Ֆէրտինանտ իշխան այս բառերով պատասխանեց. «Բաժակս կը վերցունեմ Ֆրանսական Հանրապետութեան Տ. Նախագահի կենացը մաղթելով։ Պետութեան գլխաւորի անձին անունով կը խմեմ Ֆրանսայի և Ֆրանսական ազգին համար։» Նուագածուները նուագեցին մարսէյլիզը։

Ճաշկերոյթէն յետոյ մի չքեղ երեկոյթ արուեցաւ նուագածութեամբ որին ներկայ գտնուեցան բազմաթիւ երեսփոխան-

ներ և ծերակուտականներ :

Իշխանը չորեքշաբթի երեկոյին մեկնեցաւ Պէրլին երթալու համար. ջերմ գոհունակութիւններ յայտնելով Փարիզի մէջ գտած ընդունելութենէն : Նախագահ Տ. Ֆոր պատուի Լէգէոնի պատուանշաններ բաշխեց իշխանին ուղեկցող պուլկար պաշտօնեայներին :

ՇԱՀԻ ՍՊԱՆՆՈՒԻԼԸ

Պարսկաստանի Նասրէտտին Շահը երէկ երբ ուխտի գնացած էր Շահ Ապտիւլ Ազիմի սրբավայրը, պալինների աղանդին պատկանող մի Պարսիկ ըէվոլվէրի մի հարուածով սպանեցաւ զինք այնտեղ բակին մէջ : Հարուածը սրտին ուղղուած էր և մահը գրէթէ անմիջական եղաւ : Զարնողը ձերբակալուեցաւ :

Գահաժառանգ Մուզաֆֆէր Էտտին Միրզա Վէլիահտը Դաւրէժէն խսկոյն ճանբայ ելած է Թէհրան երթալու համար :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Զէթինէէն կը հեռագրեն ապրիլ 28ին թէ Նիքոլա իշխանն իր կրտսերագոյն որդի՝ Միրքօ իշխանին հետ Հայտէլպէրկ կը մեկնի ինքզինք բժշկի մը ցուցնելու համար: Ցետոյ Մոսկուա պիտի երթայ թագադրութեան հանդէսին ներկայ գտնուելու համար :

— « Տէյլի Նիւս » կըսէ թէ Զարն իր թագադրութեան առթով Ռաքազ մը պիտի հանէ՝ բոլոր տէրութեանը մէջ խղճի ազատութիւն յայտարարող, թէեւ Սինոդը հակառակած է այդ բանի :

— Պէրլինէն կը հեռագրեն ապրիլ 28ին թէ Պուլկարիայի Ֆէրտինանտ իշխանը հոն կը սպասուի մայիս 1ին Պէրլին արուեստագիտական ցուցահանդէսին բացման հանդէսին համար : Մայիս 2ին կայսրին հետ ներկայ պիտի գտնուի թիկնապահ գնդի զօրահանդէսին, որին պիտի յաջորդէ հեծելազօրքերի ու թնդանօթաձիգ զօրքերի հետ պատերազմի փորձ մը :

— Պուտապէշտէն կը հեռագրեն ապրիլ 29ին.

« Հունգարիայի երեսփոխանական ժողովին մէջ եւեւմտական օրէնքին վրայ վիճաբանութեան միջոցին, խորհրդի նախագահը, պարոն Պանֆի, կը յայտարարէ թէ Աւստրիա-Հունգարիայի քաղաքականութիւնն Արեւելքի մէջ չէ փոխուած և կը մնայ նոյնը, այսինքն հողային հին գրութիւնը պահպանել և Պալքաններին մէջ ոեւէ հզօր օտար ազդեցութիւն մերժել :

« Նախարարապետը կը յարէ թէ սերպ կառավարութեան՝ Հունգարիայի հազարամեակի հանդէսին ներկայ գտնուիլ մերժելը անքաղաքավարութիւն մը միայն կը համարի և այդ երկրի ներքին ու արտաքին քաղաքականութեան արդի առաջնորդողների պակասութեան հետեւանք մը :

« Պարոն Պանֆի չկարծեր որ այս դէպքի քաղաքական նշանակութիւն տալ պէտք ըլլայ : »

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ «ԱՐՄԷՆԻԱ»Ի

« Արմէնիա»ի այս միջոցին ունեցած ստիպողական պէտքերին համար 3,000 ֆրանգի չափ փոխառութեան մը հարկ տեսնելով, խորհեցանք որ հանրութեան ծառայող գործի մը զարգացման վերաբերեալ փոխառութեան մը համար, աւելի յարմար կը լինի փոխանակ մեր անձնական բարեկամներէ դիմելու, հրապարակական յայտարարութեամբ մը դիմել ընդհանրութեան, անոնցմէ փափաքողներին ասպարէզ տալով մեր ընդհանրական ձեռնարկի օգնելու, ոչ միայն չվնասելով իրենց քսակի, այլ և մի փոքրիկ շահաբաժին ալ ստանալով : Այս մի փորձ կը լինի նաեւ իմանալու համար թէ մեր հայրենակիցներ ի՛նչպիսի տրամադրութեան մը մէջ կը գտնուին դեռ, 11 տարիներէ ի վեր Եւրոպայի մէջ անվհատ յարատեւող հայ լրագրի մը ոյժ տալու պէտքն զգալու մէջ, մինչեւ իսկ իրենց քսակի չվնասելով :

Այս փոխատուութիւն կը կատարուի հետեւեալ պայմաններով :

Ո՛վ ոչ ուզէ, կարող է մասնակցիլ այս փոխատուութեան : Ինքնին հասկանալի է որ փոխ տալ ուզողը վերոյիշեալ 3,000 ֆրանգէն աւելի չկրնար տալ. բայց ամենաքիչը 50 ֆրանգէն ալ պակաս չկրնար ընդունուիլ : Փոխ տուին կը տրուի պարտամուրհակ, հոս յիշուած պայմաններին համեմատ :

Փոխ առնուած դրամին կէսը պիտի վճարուի 1897 սեպտեմբեր մէկին (Ն. Տ.) և մնացած կէսը 1898 սեպտեմբեր մէկին (Ն. Տ.) : Պիտի վճարուի հարիւրին վեց տոկոս տարեկան, այսինքն 100 ֆրանգին 50 սանթիմ ամսական տոկոս : Տոկոսը պիտի վճարուի սեպտեմբեր մէկին իր գլխավճարի հետ. այնպէս որ 100 ֆրանգ տուողը 1897 սեպտեմբերին պիտի տանայ 57 ֆրանգ և 50 սանթիմ (50 ֆրանգ գլխավճարի և 7 ֆր. և 50 սանթիմ ալ 100 ֆրանգի տոկոսը 15 ամսի համար — 1896 յունիսէն 1897 օգոստոսի վերջ —) և 1898 սեպտեմբերին ալ պիտի ստանայ 53 ֆրանգ (50 ֆրանգ գլխավճար և 3 ֆրանգ ալ տարեկան տոկոս 50 ֆրանգին համար) : Այս հաշուով, օրինակի համար, 500 ֆրանգ փոխ տուողը կը ստանայ 97 սեպտեմբեր 1ին 287 ½ ֆրանգ (250 ֆր. գլխավճարէն և 37 ½ ֆր. 15 ամսեայ տոկոս 500 ֆր.ին համար). իսկ 98 սեպտ. 1ին 265 ֆրանգ (250 ֆր. գլխավճար և 15 ֆր. տարեկան տոկոս 250 ֆր.ին) :

Վճարմունքներին փոխարէն իբրև երաշխաւորութիւն կը ներկայացուին «Արմէնիա»ի բաժնորդագիրները : Փոխատուն, եթէ ուզէ, իրեն կը յանձնարարուի իրեն յայտնի անձերի բաժնորդագիրներն ստանալը, պայմանաժամին իրեն վճարուելիք դումարին համեմատութեամբ և այս մասին իրեն և իր որոշած բաժնորդներուն հետ կանխաւ լինելիք համաձայնութեան մը համեմատ :

Փոխ տրուած դրամի տոկոսը կը սկսի բանիլ 1896 յունիս ամսի սկզբէն (Ն. Տ.) :

Այս պայմաններով փոխ տրուած դրամ կընդունինք այսօրէն սկսելով մինչեւ առաջիկայ մայիս ամսի վերջը. մինչեւ մայիս 31 մեր ձեռք հասած դումարն որչափ ալ եղած լինի, այդ թուականին կը փակուի այս փոխատուութիւն և ա՛լ սոյն պայմաններով դրամ չենք ընդունիր :

Ասով փորձած պիտի լինինք նաեւ թէ մեր այս ընդհանրական ձեռնարկի համակրիլ ցոյց տուողներէն, կանոնաւոր և պարկեշտ միջոցներու դիմելով, ո՞րչափ ոյժ և աջակցութիւն կարելի է եղեր յուսալ մի ստիպողական պարագայի մէջ : Այս մասին փութաջանութեան օգտակարութիւնը ցոյց տալու համար, տեղն է հոս յիշեցուցնելու նաև լատինական առածը. Bis dat qui cito dat(կրկնապատիկ կուտայ ով որ շուտ կուտայ) :

Տնօրէն-Խմբագիր Արմէնիայի
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով :

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒՀԻ ՄԸ (Սպառած).

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներու պանդխտութեան տխուր հետեւանքներու մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացուցնէ վիպական կերպով.) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԴԱՄԱՌ ՔԱՔԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբեան աւարտելուն (Մեծ Նուն հայ բանաստեղծին վերջերս գրուած պատուաստուն ընտիր ոտանաւորն է՝ 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են) : 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՑԱՃԿԱՀԱՅԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆՆԵՐ (Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղագրական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ : Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչների թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը :) Գին 50 սանթիմ (35 սանթիմ) :

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի էջ մը Փորթուգալեանի գրած առաջնորդողներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութսունդիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) (1 ֆրանք) : 1 ֆր. 40 սանթիմ.

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար) : (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Յունաստանի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ :

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԻՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չի լինելով կորսուած են այժմ : Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տարածուած ազգային երգ տրաններուն մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ : Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւններու տակ ներշնչուելով գրուած են : Գին (10 սանթիմ) 15 սանթիմ :

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՑՈՅ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱԲԻՊ.

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացուցնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայը իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջի՛ վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ : Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ) :

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi Allées de Meilhan 44.